Արամ ԻՍԱԲԵԿՅԱՆ.

«Դեռ անցնելիք ճանապարհ կա...»

Հոգսի եւ գոհունակության սահմանազատումը իրակա՞ն է, թե՞ շինծու:

Ստեղծագործության եւ աշխատանքի տարբերությունը մե՞ծ է, թե՞ չկա էլ:

Նկարչի գունազգացողությունը բնո՞ւյթ է, գենետիկ մտածողություն, թե՞ ժամանակի աղրում:

Գեղարվեստի ակադեմիայի ճանապարհին միտֆ բառից բառ էր թռչում ու ոչ մի կերդ չէր կոնկրետանում, սկիզբը չէր գալիս, վերջը կորչում էր, հերթականությունը՝ խառնվում: Ես սա դասճառաբանեցի Արամ Իսաբեկյանի հետ մեր նախորդ զրույցով, որի ընթացքում թեեւ շատ բաների մասին խոսվեց, բայց ասելիք էլ շատ մնաց:

Իսկ նախորդի եւ հերթականի կապը ինքն իրեն եկավ. «Նոր ուսումնական տարին հոգաեր բերե՞ց...»: «Հոգսերը միշտ էլ կան ու կլինեն, քանի դեռ ակադեմիան չի հասել այն մակարդակին, ինչպիսին ես էի երազում: Սա վերաբերում է ե՛ւ շենքային պայմաններին, ե՛ւ ուսումնական հնարավորություններին»,–ասաց ռեկտորը:

Զրույցի շարունակությունն արդեն ստեղծագործության դաշտում էր, առաջին հարցը. «Գունաշխարհի ակունքը»:

–Գույնե՞րը... գալիս են տվյալ ժամանակում ունեցած տրամադրությունից, զգացմունքներից, ապրումներից: Իմ բոլոր նկարները չէ, որ կարմիրի կամ կանաչի, այսպես ասած, գերակայության մեջ են: Որոշակի շրջանի բազմաթիվ նկարներ ունեմ, որոնց մեջ կարմիրը չկա: Այդ երկու գույները սկսեցի օգտագործել վերջին տարիներին եւ նույնիսկ մի շարք եղավ կարմիր–կանաչի համադրություններով: Տրամադրությունն ինքն է հուշում–ընտրում գույնը: Վտանգ, ցավ, անհանգստություն: Սրանք զգացողություններ են, որոնք արտահայտվում են ընդգծված–արված գույներով:

–Հնարավո՞ր է գույներով գուշակել նկարչի բնույթը:

–Ամենեւին: Ես չգիտեմ մի նկարչի, որ իր ամբողջ կյանքում միայն որոշակի գույներով ստեղծագործի: Նկարիչը օգտագործում է բոլոր գույներն էլ: Դա նույնն է թե՝ մատնահետքերով փորձեք որոշել մարդու բնավորությունը: Շատ ուսումնասիրություններ են եղել, հայտնի նկարիչների ստեղծագործությունների վերլուծության փորձեր են արվել: Օրինակ, կարծիք կա, որ Վան Գոգի կյանքի վերջին շրջանի ստեղծագործություններում դեղինի գերակշռությունը նրա հիվանդությամբ է պայմանավորվում: Միաժամանակ կարծիք կա, որ հիվանդությունը կապ չունի ստեղծագործության մեջ արտահայտված գունատրամադրության հետ: Այնպես որ միայն գույներով դատել չի կարելի... Կամ Պիկասոն ունի մի քանի շրջաններ: Այսպիսի տարբերակում են դրել. երկնագույն շրջան, վարդագույն... հետո՝ ընդհանրապես ամեն ինչ խառնվեց: Պարզապես դրանք այդպիսի շարքեր են, որոնք արտահայտում են տվյալ շրջանում ունեցած տրամադրությունները:

–Արամ Իսաբեկյանի գույները ժամանակի հետ փոփոխություններ կրե՞լ են: Իսկ ո՞ճը...

–Երբ դեռ ուսանող չէի, նկարում էի շատ վառ գույներով, Վան Գոգ էի սիրում, իմպրեսիոնիստներ... Այդ ոճով բազմաթիվ նկարներ եմ արել, հատկապես՝ բնանկար, դիմանկար: Ուսումնական տարիներին արդեն հասկացա, որ պետք է խորանալ պրոֆեսիոնալ արվեստի մեջ, իսկ հետո–ն ինքը կթելադրի իր պահանջները: Տրամադրությունը արտահայտելու մեծ պահանջ ունեի, երբ եղան Սումգայիթի դեպքերը, երկրաշարժը... Երկար ժամանակ տանջվում էի, ցավ ունեի եւ նկարել էի ուզում: Ծնվեց «Բրենինների խախճանը» կտավը: Այնուհետեւ էլի մի քանիսը, եւ ստացվում է մի ամբողջ շարք: Այնուհետեւ եկավ մի շրջան, երբ յուղաներկով չէի աշխատում եւ բազմաթիվ գրաֆիկական աշխատանքներ ծնվեցին: Այդպես է, երբեք չգիտես, թե հաջորդ պահին տրամադրությունդ ինչ կթելադրի եւ ապրումներդ ստեղծագործության մեջ ինչ ոճական դրսեւորումներ կունենան:

–Ցանկություն ունեցե՞լ եք նույն այդ տրամադրությունները արտահայտել արվեստի այլ ձեւով, ասենք՝ գրել:



–Մի հոդված գրեցի՝ տպագրվեց: Նույնիսկ ինձ համար զարմանալի էր, որ գրեցի, քանի որ դա կարծես իմը չէր: Իմը՝ նկարչությունն է:

Մարդ ծնվում է, ապրում է եւ քիչ ժամանակ ունի խորանալու իր նախընտրած ասպարեզի մեջ: Նկարչությունն ինքը այնքան բազմաժանր է, որ նկարչի ժամանակը չի բավականացնում մեկ ժանրի մեջ որոշակի արդյունքների հասնելու համար: Ուրիշ ասպարեզներում ուժերը փորձելու մասին խոսք լինել չի կարող: Նույնիսկ՝ հանճարեղ Լեոնարդո դա Վինչիի նկարչությունը տուժեց, քանի որ նա զբաղվում էր նաեւ ճարտարապետությամբ, գյուտեր էր անում, ներկեր էր հորինում եւ այլն: Նրա նկարներից մի քանիսը ժամանակի ընթացքում քայքայվեցին, քանի որ նկարված էին իր հորինած ներկերով... Իմ կարծիքով՝ ստեղծագործողը պետք է խորանա մեկ ոլորտում:

–Վերադառնանք Արամ Իսաբեկյանին: Ես գիտեմ, որ Ձեր հիսունամյա հոբելյանն է: Արվեստասերները կծանոթանա՞ն Ձեր նոր ստեղծագործություններին:

–Անհատական ցուցահանդես չեմ ծրագրել, քանի որ բոլոր սրահները վերանորոգվում են, Նկարիչների միության սրահներն էլ զբաղված են: Նման ցուցադրություն նախատեսում եմ մեկ տարի հետո: Մյուս կողմից էլ՝ ես ինձ այդ տարիքում չեմ զգում եւ այն նշելը ինձ համար որեւէ նշանակություն չունի:

–Վերջին ակորդը. Ի՞նչ տվեցին Ձեզ անցած տարիները:

–Ես իմ ճանապարհը մանկուց եմ ընտրել եւ մինչեւ հիմա էլ նույն չափով սիրահարված եմ նկարչությանը: Պարզ է, որ այդ տարիների ընթացքում ես ինչ–որ բան ստեղծել եմ, նախեւառաջ ինձ համար եմ արել: Իհարկե, երբեք գոհ չեմ եղել իմ նկարներից: Միշտ մտածել եմ, որ ավելի լավ կարող էի նկարել: Ցավոք, ժամանակը քիչ է ստեղծագործելու համար, քանի որ միաժամանակ աշխատում եմ եւ փորձում եմ Գեղարվեստի ակադեմիան գոնե մոտեցնել իմ երազների ուսումնական հաստատության մակարդակին:

...Ու դեռ անցնելիք ճանապարհ կա, որը պիտի անցնեմ նկարելով:

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ